

# ՓԱՍՏԱՔԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵՑԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

28.06.2023 21:20



Այսօր Փաստաբանական ակադեմիայի 70 շրջանավարտ ստացավ փաստաբանական գործունեության արտոնագիր:

Հանդիսավոր արարողությունը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության օրիներգի ներքո:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Դիմելով հավակնորդներին՝ Փաստաբանների պալատի նախագահը նշեց, որ Փաստաբանական ակադեմիան ավարտելը հեշտ գործընթաց չէ և կարելի է համարել, որ փաստաբանության ոլորտում առաջին բարդ խնդիրը սկսնակ փաստաբանների համար արդեն հաղթահարված է:

**«Փաստաբանի առաքելության ճանապարհին դուք մշտապես պայքարելու եք Ձեր վստահորդների շահերի պաշտպանության համար: Այսօր էլ մոտք եք գործում փաստաբանական համայնք, երբ մեր առջև առկա են խնդիրներ: Վստահ եմ, որ մենք միասին ջանքեր ենք գործադրելու դրանք հավուր պատշաճի հաղթահարելու համար»**, - նշեց Սիմոն Բաբայանը:

Հավակնորդներին շնորհավորեց նաև ՀՀ Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը:

**«Խոհեմություն, արդարություն, համարձակություն և զսպվածություն. Ահա այն նվազագույն չորս առաքինությունները, որոնք յուրաքանչյուր փաստաբան պետք է ձգտի ունենալ »**, - ասաց Արա Զոհրաբյանը:

Հավակնորդներին շնորհավորական ուղերձներ հղեցին նաև Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Մարինե Ֆարմանյանը և Կարեն Մեժլումյանը:

Շնորհակալական խոսքով հանդես եկան նաև հավակնորդներ Տաթևիկ Գալստյանը և Հովհաննես Հովհաննիսյանը:

Ելույթներին հաջորդեցին փաստաբանների հանդիսավոր երգման և արտոնագրերի հանձնման հանդիսավոր արարողությունները:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```